# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 231

*հերթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողով 1-ը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Մեծամոր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| *Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը* | *Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը* | *Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը)* |
|---|---|---|
| *ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի (Մեծամոր քաղաք)*<br><br>*04-003-0101-0090 կադաստրային ծածկագրով 0.04112 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք* | *04-003-0101-0090 կադաստրային ծածկագրով 0.04112 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր* | *Համաձայն Արմավիր-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի* |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող* | | |
| | | **Դ. Գրիգորյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «5» «հունիսի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ապահովելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետով սահմանված՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին» սահմանված պահանջները, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ ներկայացված պայմանը (կցվում է):

4. Մեծամոր համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մեծամոր քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի (Մեծամոր քաղաքը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: